Արձանագրություն 2

ՀՀ Արագածոտն մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀ-ԱՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-21/25» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 06.10.2025թ. ժամը 11:00-ին:

Հանձնաժողովի նախագահ

Էդգար Մնոյան - ՀՀ Արագածոտն մարզի ծաղկահովիտի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ

Հանձնաժողովի Անդամներ

Նարեկ Ենոքյան-ՀՀ Արագածոտն մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի ՔՀՀԳ բաժնի պետ

Արծրուն Մելքոնյան- ՀՀ Արագածոտն մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի սոցիալական աջակցությանբաժնի գլխավոր մասնագետ

Մնացական Գալստյան - ՀՀ Արագածոտն մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ

Հենրիկ Խլղաթյան ՀՀ Արագածոտն մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի ՔՀՀԳ բաժնի առաջին կարգի մասնագետ

Սիրուն Կարապետյան - ՀՀ Արագածոտն մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի սոցիալական աջակցության բաժնի առաջին կարգի մասնագետ

Էդգար Օհանյան - ՀՀ Արագածոտն մարզի Ծաղկահովիտի համայնքի Գեղաձոր բնակավայրի վարչական ղեկավար

Գնումները Համակարգող – Ն.Տիգրանյան

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները և տվյալները.

1. ՀՀ Արագածոտն մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀ-ԱՄ-ԾՀ-ԳՀԱՇՁԲ-21/25» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել.

ա/ «Մարզանդ» ՍՊԸ-ն՝ ՀՎՀՀ 05012047, էլ հասցե mar.zand@mail.ru, հեռ. 093599309

2. Տվյալներ մասնակիցների հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 7, դեմ – 0

3. Տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 «Մարզանդ» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգին մասնակցության հայտի ապահովումը վճարվել է ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական հաշվին՝ կանխիկ փողի ձևով, և հայտով ներկայացվել է վճարման հանձնարարագիր, համաձայն որի հայտի ապահովման գումարը վճարվել է ոչ թե հրավերով սահմանված 900008000466 գանձապետական հաշվեհամարին այլ, հրավերի 10-րդ կետի («ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆԵՐԸ») 10.3 ենթակետով սահմանված պայմանագրի ապահովման վճարման 900008000664 գանձապետական հաշվեհամարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 7, դեմ – 0

4. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1 **ՀՀ Արագածոտն մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղաձոր բնակավայրի մշակույթի տան դահլիճի հիմնանորոգման աշխատանքներ**	
	Գնման գինը՝ 57 415 919ՀՀ դրամ	
«Մարզանդ» ՍՊԸ	47 830 000	57 396 000

5. Հայտերի վերաբերյալ պարզաբանումներ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2025թ. հոկտեմբերի 14-ին ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 7, դեմ – 0

7. **2025թ. հոկտեմբերի 14-ին ժամը 11:00-ին կայացած Հայտերի գնահատման նիստի մասին**

Ընթացակարգի հայտերի գնահատման փուլում՝ 09.10.2025թ., «Մարզանդ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ներկայացրել է գրություն, որտեղ «ԱԿԲԱ բանկ» ԲԲԸ-ի բանկային գործառնությունների վարչության պետը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ուղղում կատարելու նպատակով, որպեսզի հայտի ապահովման գումարը գանձապետական 90000800664 հաշվեհամարից փոխանցվի 900008000466 հաշվեհամարին, ինչն էլ կատարվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից և ներկայացվել է Մեմորիալ օրդերը, որտեղ երևում է որ հայտի ապահովման գումարը արդեն իսկ փոխանցված է ՀՀ ՖՆ գանձապետական 900008000466 հաշվեհամարին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը **որոշեց.**

ա/ Գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ պարզաբանում ստանալու համար, արդյոք կարող է նշված պայմաններում Պատվիրատուն հիմք ընդունել «Մարզանդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման ուղղված տարբերակը և վերջինիս ճանաչել որպես Ընթացակարգի ընտրված մասնակից

բ/ Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ֆինանսների նախարարությաունից պարզաբանման պատասխանը ստանալուն հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 7, դեմ – 0

8. **2025թ. հոկտեմբերի 27-ին ժամը 11:00-ին կայացած գնահատող հանձնաժողովի նիստի մասին**

8.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է պարզաբանման պատասխանը՝ որով շեշտադրվել է, որ հայտերը անհրաժեշտ է գնահատել ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներով՝ համաձայն որոնց հայտի ապահովումը շտկման ենթակա փաստաթուղթ չէ, ուստի գնահատող հանձնաժողովը **որոշեց**.

ա/ Հիմք ընդունելով սույն արձանագրության 3.1 և 8.1 կետերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին N 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ *«Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են*

հրավերի պահանջներին անհամապատասխան», մերժել «Մարզանդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

բ/ Գնման ընթացակարգը հայտարարել չկայացած և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հայտարարել 10 օր անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 7, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի

նախագահ՝ _____ Է. Մնոյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ն. Ենոքյան

_____ Մ. Գալստյան

_____ Ա. Մելքոնյան

_____ Հ. Խլղաթյան

_____ Ս. Կարապետյան

_____ Է. Օհանյան

Գնումները համակարգող՝ _____ Ն. Տիգրանյան